ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
26	Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Աշնանային-ձմեռային բաճկոն՝ ուսադիրներով (տղամարդու), դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոններ ունեցող դատական կարգադրիչների համար (Ձև 9): Պատրաստվում է մուգ կապույտ գույնի, անջրաթափանց, 50-70 միկրոն հաստությամբ կտորից (51% պոլիեսթեր, 49% բամբակ, 215 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%)՝ կազմված ուղիղ ուրվագծով, ձախ լանջափեշը 5 կոճակով կոճկվող գաղտնակար հանգույցով, կայծակնաճարմանդով կոճկվող, փեշի սկզբից մինչև օձիք, ներկարված 1 սմ հաստությամբ տաք ներդիրից և հանվող տաք ներդիրից (3 սմ հաստությամբ), տաք ներդիրները թևքերով են, որոնք ամրացվում են կայծակնաճարմանդով, պողպատագույն մորթուց հանովի օձիքից (օձիքի լայնքը 12 սմ) և տաք ներդիրով գլխանոցից: Թիկնամասը և լանջափեշերը կրծքամասում և ուսամասում 2 կտրվածքով են: Միացման տեղով անցնում է 2,5 մմ լայնքով մուգ կարմիր երիզ: Թևքանիքի վրա անցնում է 2,5 մմ մուգ կարմիր եզրագիծ: Երկու լանջափեշի վրա առկա են 3,5 սմ թեքությամբ կայծակնաճարմանդով կոճկվող ներկարված գրպաններ: Աստառը մետաքսյա է (8-C5-ԲՇ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%), բաճկոնն ունի ձախ կողմում կոճկվող ծոցագրպան: Ծոցագրպան կարվում է նաև ներդիրի վրա, իսկ գոտկատեղում և ներքում՝ թաքնված գոտկապարան: Բաճկոնը հանվող ուսադիրներով է, որոնք էլ ունեն 2-ական ամրակներ: Գլխանոցը հանովի է և պահվում է մեջքի մասում՝ օձիքի տակ ներկարված գրպանում, որը կայծակնաճարմանդով է:

	Ձախ թևքին առկա է թևքանշան (ՁԹ 20), իսկ աջ թևքին ՀՀ դրոշ՝ նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Բաճկոնը կարվում է ծնկներից 15-20 սմ բարձրությամբ: Նախքան բաճկոնների պատրաստումը բաճկոնների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Բաճկոնների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև բաճկոնների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված անհատական չափսերի, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

И / П Армине Овсепян Элбек в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
26	-